

ՈՂՋԱԿԻԶՎԱԾ ԳԱԶԵԼՆԵՐ

ՀԻՆ ՊԱՆԴՈՎՈՒՄ ՄԵԿ-ՄԵԿՈՒ ԴԵՄ ԼԱՑԻՆՔ ԳԼԽԱՀԱԿ

2 ԳԱԶԵԼ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆԻՆ

ԳԱԶԵԼ-ԳՅՈՒՄՐԻ

ԳԱԶԵԼ – ԵՐԵՎԱՆ

2 ԳԱԶԵԼ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ

ԳԱԶԵԼ – Հ. Խ. Ս. Հ.

ԳԱԶԵԼ – ԿԱՐՈՏ

ԳԱԶԵԼ - « ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ»

ՈՂՋԱԿԻԶՎԱԾ ԳԱԶԵԼՆԵՐ

Ստվերներ են ծածանում, - վերադարձի՛ր, դեռ շուտ է,
Լույս կա դարձի կածանում, - վերադարձի՛ր, դեռ շուտ է:

1921, հունիս

Հին պանդոկում մեկ-մեկու դեմ լացինք գլխահակ,
թվաց լացը դարձի հուշ էր – լացինք գլխահակ:

Բացվեց վիհը օտարացման, մութ ու անհատակ,
գինին այնքան թույլ, անուժ էր – լացինք գլխահակ:

Ու երբ դրին նոր նոր շիշեր սեղանի վրա,
Զգացինք որ արդեն ուշ էր – լացինք գլխահակ:

1922 դեկտ.

2 ԳԱԶԵԼ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆԻՆ

1

Որպես միգոտ մի հեռու՝ տեսնում եմ դարըդ վերջին,
օրերում ու երգերում – տեսնում եմ դարըդ վերջին:

Ու հիմա, երբ փողոցում քեզ պատահում եմ հանկարծ,
թվում ես մի՞՞ն ու երագ – տեսնում եմ դարըդ վերջին:

Մենք անցնում ենք նույն մայթով օտարների պես երկու,
մենք ներում ենք մեկ մեկու – տեսնում եմ դարըդ վերջին:

Խարույկի՛ պես, երգի՛ պես հրասիրտ ու հրադեմ,
ահա օրերը իմ դեմ – ահա և դարըդ վերջին...

2

Դու անցյալիդ կնայես ու կժպտաս դու,
կնայես և ներկայիդ – ու կժպտաս դու:

Այնքան հեռու են նրանք, ու այնքա՛ն ծանոթ,
որպես երգ ու առավոտ – ու կժպտաս դու:

Որպես բաղեղը գվարթ հին ծառի մեջքին՝
Նորերը քեզ կգրկեն – ու կժպտաս դու:

Դու մի մթին իրիկուն փողոց դուրս կգաս,
կխորհես, որ դու չկաս – ու կժպտաս դու:

Բայց մի հետին փողոցում, մի պատուհանից,
կլսես երգերըդ հին ու կժպտաս դու:

Տուն կդառնաս ու վաղուց երգերըդ գրած
մի անգամ էլ կկարդաս – ու կժպտաս դու:

«1924 թ.»

ԳԱԶԵԼ-ԳՅՈՒՄՐԻ

Եկել եմ սիրտն իմ ծախեմ - մի բաժակ գարեջրով,
մտնեմ քո լոթի թաղը – մի բաժակ գարեջրով:

Օ՛, հարբած, օ՛, բաց քաղաք, խնդության, փոշու, հացի,
խմի՛ր իմ վերադարձը – մի բաժակ գարեջրով:

Քո աչքում մի հաշիվ է լրջախոհն ու հարբածը,
քեզ նման ես էլ բաց եմ – մի բաժակ գարեջրով:

Մինչդեռ ես կարծում էի քեզ մի քիչ խելքի եկած,
օ՛, ներիր իմ կասկածը – մի բաժակ գարեջրով...

<1924 թ.>

ԳԱԶԵԼ – ԵՐԵՎԱՆ

1

Այնքան կարոտ, այնքան կրակ – պիտի թողնեմ քո փոշում,
ու արնավառ այնքան երա կ – պիտի թողնեմ քո փոշում:

Թափառումներ հազարախոհ ու կարոտ անորոշ,
այնքան երգ ու այնքան դրոշ – պիտի թողնեմ քո փոշում...

Այնքան պայծառ առավոտներ ու կեսօրներ արևոտ,
իրիկնային այնքան կարոտ – պիտի թողնեմ քո փոշում.

Այնքան կրակ, այնքան կարոտ, այնքան բոցեր դրոշի,
ու անունս, որպես փոշի – պիտի թողնեմ քո փոշում...

2

Դուրս կգամ մի իրիկուն – ու կհիշեմ քեզ,
հեռավոր այն քաղաքում – ու կհիշեմ քեզ:

Կմտնեմ հազար ակումբ, կմտնեմ կինո՝
կլինեմ գուցե գինով – բայց կհիշեմ քեզ:

Կամ որպես վերջին բոսայակ, հոգնած, կխաքաղց,
կքնեմ մի պատի տակ – ու կհիշեմ քեզ:

Կզարթնեմ ոսկեդեղին լուսաբացի դեմ,
կխմեմ մի բաժակ թեյ – ու կհիշեմ քեզ...

3

Ուր որ գնամ՝ հետս կգա – սրնգահարը իրիկնային,
Աբովյանի պատին կոթնած - սրնգահարը իրիկնային:

Բոլոր թողած կայաններում ես կլսեմ երգն այդ անկամ,
որ երգել է հազար անգամ սրնգահարը իրիկնային:

Կկորցնեմ հազար անուն, որպես չեղած մի վարդարան,
բայց գիտեմ, որ չեմ մոռանա - սրնգահարը իրիկնային:

Օ՛, երկիր իմ, երեկիդ պես դառնակսկի՛ճ ու վշտալուր,
ներկայիդ պես այրող ու հուր – սրնգահարը իրիկնային...
1924 թ.

2 ԳԱԶԵԼ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ

1

Երգում է բաց երեկոն – օ՛, տրտում Տերյան,
դեղնալույս մի կրակով – օ՛, տրտում Տերյան:

Ահա փռել ես փոշիդ քաղաքի վրա,
ու թախիծդ հնամյա – օ՛, տրտում Տերյան:

Ու փառվել ես մշտալաց անձրևների տակ
խարույկդ կարմրակրակ – օ՛, տրտում Տերյան:

Ու սիրտը քո – դրոշա՛կ – հողմերում ընկած,
ծվատվա՛ծ մինչ լուսաբաց – օ՛, տրտում Տերյան...:

2

Ո՞վ է վառվել քո կրակից, ո՞վ է թքում քո կրակին,
ո՞ն է լուսե այս կիրակին – Վահա՛ն Տերյան,-

Երբ դու այնքան հրասիրտ ես, հրասիրտ է երազը քո,
երբ դեռ մերն է անունդ անգին - Վահա՛ն Տերյան:

Ո՞վ է կիզվել քո ծարավից, ո՞վ է թքում քո ծարավին,
ո՞վ է հասել քո ծարավին - Վահա՛ն Տերյան –

Անամո՛ք էր մորմոքը մշտամշուշ քո օրերում,
բայց վա՛ն մնաց քո կրակը - Վահա՛ն Տերյան:

Երբ որպես զոհ դարավերջի բանաստեղծի քո ձեռներով,
դու բաց արիր քո երազը - Վահա՛ն Տերյան:
1924 թ.

ԳԱԶԵԼ – Հ. Խ. Մ. Հ.

1

Օ՛ հրասիրտ ու հրակեզ – լուսապայծա՛ն իմ Հայաստան,
չի՛ մոռանա պոետը քեզ – լուսապայծա՛ն իմ Հայաստան:

Օ՛ գյուղերդ միգում կորած, ճամբաներդ նեղ ու փոշոտ,
օ՛ սիրտը քո վառ ու բոսոր – լուսապայծա՛ն իմ Հայաստան.

Հողդ արնոտ, արյո՛ւնդ վառ, ու արևդ այրող ու շոգ,
օ՛ արևդ արնաշողշող – լուսապայծա՛ն իմ Հայաստան:

Որքան չար էր մութը անդեմ, ու գիշերը որքան ճնշող,
այնքան հոշիւր էր քո զարթոնքը – լուսապայծա՛ն իմ Հայաստան:

Օ՛ սիրտը քո վառ ու հրկեզ, խարույկի՛ պես, խարույկի՛ պես,
չի՛ մոռանա պոետը քեզ - լուսապայծա՛ն իմ Հայաստան...:

2

Հո՛ւր են հիմա գծերդ- ո՞ւր եմ հիմա հեռանում,
օրդ հորձա՛նք դարձել է - ո՞ւր եմ հիմա հեռանում:

Ահա ես ետ եմ նայում, ու թվում է թե դո՛ւ էլ
հինը երա՛զ ես կարծել - ո՞ւր եմ հիմա հեռանում:

Ահա զվարթ զնգում ես ջրանցքների՛ դ հորձանքում,
ու մշուշո՞ւ անցել է - ո՞ւր եմ հիմա հեռանում:

Ու ցնդե՛լ են օրերում տազնապները քո անդեմ,
ինչ որ ծա՛նր էր, ինչ որ ծե՛ր - ո՞ւր եմ հիմա հեռանում:

Երկի՛ր իմ հուր ու հզոր, թող զա՛ն, փակեն իմ ճամփան
քո հրազան բոցերը - ո՞ւր եմ հիմա հեռանում...

«1924 թ.»

ԳԱԶԵԼ – ԿԱՐՈՏ

Մի իրիկուն դուրս կգամ այն մեծ քաղաքում,
և բազմահարկ և հսկա – այն մեծ քաղաքում:

Կզգամ, որ կա մի երկիր, անուշ ու անզին,
նրա՛ն կերգեմ վերստին – այն մեծ քաղաքում:

Ու այնքան խեղճ կլինի շե՛շտը իմ երգի,
որ չծնված կմեռնի՛ - այն մեծ քաղաքում:

Ու կարոտն իմ կհեա՛ցանկությանբ ազահ,
ինձ մենակ ու որբ կզգամ – այն մեծ քաղաքում:

Մի իրիկուն դուրս կգամ հույզերով դարձի,
կզտնեմ մի բոսյակի – այն մեծ քաղաքում:

Մենք միասին կմտնենք հետի՛ն մի կաբակ,
հազա՛ր տարվա բարեկամ – այն մեծ քաղաքում:

Կխմենք ու կփսխենք հատակի վրա,
Երկի՛ր իմ, փոխվա՛ծ երազ – այն մեծ քաղաքում...

1924 թ.

ԳԱԶԵԼ - « ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ»

Ես անգրիչ մի պոեմ եմ – նաիրական իմ աշխարհից,
քիչ սրընթաց, քիչ էլ ե՛տ եմ – նաիրական իմ աշխարհից:

Հազար երգ ու խո՛սք կլսեք սրտի ակո՛սը ոռոզող,

ու կզգաք, որ հորդան գետ եմ – նաիրական իմ աշխարհից:

Կարո՛ւտ կզգաք այրվող ցավի, տանջող ու հուր հարվածների,
ու կզգաք, որ արնոտ նետ եմ – նաիրական իմ աշխարհից:

Ես անգրիչ մի պոեմ եմ փողոցների փոշով հարբած,
քիչ իմաստուն, քիչ էլ խենթ եմ – նաիրական իմ աշխարհից...:

1924 թ.